

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2022 թվականի
մայիսի 4-ին կայացած գիտխորհրդի նիստի

Օրակարգում՝

1. Ավարտական աշխատանքների և թեզերի պաշտպանության նախապատրաստման և ընթացքի մասին /զեկ. բակալավրիատի և մագիստրոսական ծրագրերի ղեկավարներ/
 2. Գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման մասին /զեկ. ամբիոնի վարիչներ և հոգեբանության գիտահետազոտական կենտրոնի ղեկավար/
 3. Հոգեբանական աջակցության գիտագործնական լաբորատորիայի գործունեության կարգի հաստատում /զեկ.Արմինե Արարատյան/
 4. Պրակտիկայի կազմակերպման և անցկացման մասին/ զեկ. Հ.Հովհաննիսյան, Ն.Մկրտչյան, Ա.Մարգարյան, Ն.Վարդանյան, Հ.Հովհաննիսյան, Լ.Սարգսյան/
 5. Ընթացիկ հարցեր
1. Լսեցին ավարտական աշխատանքների և թեզերի պաշտպանության նախապատրաստման և ընթացքի մասին հարցը: Արտահայտվեցին ամբիոնի վարիչներ՝ Գ. Շահվերդյանը, Ն. Խաչատրյանը. Հ. Ավանեսյանը և դոցենտ Հ. Հովհաննիսյանը: Ելնելով ատեստավորման ժամանակացույցից, կարծիքներ եղան այն մասին, որ գրեթե հնարավոր չէ վերահսկել ուսանողին: Քննարկումներից հետո որոշեցին. ըստ կանոնակարգի խիստ հետևել ավարտական և մագիստրոսական աշխատանքների ատեստավորմանը, ինչպես նաև պաշտպանություններին յուրաքանչյուր ուսանողին տրամադրել 1 ժամ:

2. Ինչ վերաբերում է գիտահետազոտական աշխատանքների կազմակերպմանն և իրականացմանը, ֆակուլտետի ամբիոնի վարիչները ներկայացրեցին ամբիոնային թեմաները և ուղղությունները: Նշեցին, որ գիտահետազոտական թեմաները նաև պետք է ունենան պատվեր կազմակերպությունների կողմից: Ա. Բաղդասարյանը իր ելույթում նշեց, որ առաջարկությամբ հանդես կգա այդ հարցի կապակցությամբ, որ բոլոր խնդիրները լուծվեն օրինական դաշտում(գ/հ թեմաների պատվեր, վճարում. . . .)
3. Լսեցին հոգեբանական աջակցության գիտագործնական լաբորատորիայի գործունեության կարգի հաստատման հարցը: Զեկույցով ելույթ ունեցավ կենտրոնի տնօրեն Ա. Արարատյանը: Նա ներկայացրեց կառուցվածքը ըստ մասնագիտական ուղղությունների, տարվող աշխատանքները մագիստրոսների պրակտիկական կազմակերպելու համար, համագործակցությունները ԵՊՀ-ի հետ և առաջարկ եղավ այն անվանել «Հենարան կենտրոն»: Նշվեց նաև, թե ում համար է նախատեսվում այն և կենտրոն դիմելու պայմանները:
4. Յուրաքանչյուր ամբիոնի պրակտիկայի պատասխանատու տեղեկություններ տրամադրեց պրակտիկայի անցկացման վայրի և արդյունքների վերաբերյալ:
5. Ա. Բաղդասարյանը ներկայացրեց ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի Գ. Արշակյանի անվան գիտահետազոտական երիտասարդական կենտրոնի կանոնադրությունը և կենտրոնի գործառույթները:
Ս. Զաքարյանը ներկայացրեց ամբիոնի ասպիրանտի թեմայի հաստատում:
Ա. Բաղդասարյանը տեղեկացրեց շրջաբերականը, որը նվիրված էր կրթական ծրագրերի ղեկավարներին: Առաջարկվեց Փիլիսոփայության ամբիոնից բակալավրիատի կրթական ծրագրի պատասխանատու

նշանակել դոց. Ս. Պետրոսյանին, իսկ հոգեբանության ամբիոնից՝
պրոֆ. Վ. Պապոյանին:

Ա. Բաղդասարյանը տեղեկացրեց նաև դիպլոմների հանձնման ձևաչափը,
ինչպես ԵՊՀ կենտրոնական մասնաշենքում, այնպես էլ՝ ֆակուլտետում:

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Յաֆա Նիստի քարտուղար՝ Վ. Պապոյան